

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. Պոչիս, 20 Օգոստոս

Երեկ գիշեր Օգոստոս 29ին տօնեցինք Ապտիւլ Համիտ խան Ղազիի գահակալութեան տարեգարձը: Այս տարի, փառք Ալլահին, փատիշահինս քիչ մը սիրտ առերէ. թոյլատրուած էր, հակառակ վերջին երեք տարիներու սովորութեան, արհեստական կրակներու պայթուցիկներ արձակել: Վոսփորի Գաւազէն սկսեալ մինչեւ Պէշիկթաշ՝ երկու ամբարն ալ փառաւոր հրաշառութիւն մէջ էին. ամէն կողմ նուագ, կրակներ և ամբարի խուռն բազմութիւն մը. լուսաւորուած էին փաշաներու, պաշտօնեաներու և օտար զեւպաններու տուները, այսինքն այն ամէն անձերու տուները, որոնք ի հաշիւ Սուլթանի կառավարութեան կայրին: Իսկ մասնաւոր անձեր համարեալ և ոչ մէկ ճրագ վառած էին: Պաշտօնաւոր մակըոյժներու այս կեղծ խրախճանութեան քողի տակէն կը լսուէին բոլոր ազգերու—վաճառական, արհեստաւոր, բանոր և այլ իր ճակտի քրտինքով ապրող դասակարգերու խուլ անէծքն ու հայհոյանքը: «Գահը գլխուն բըլի, մէկալ տարի այս օրս չի հասնի, իշալլահ թալման ծէսնէ ասիկա» և այլ նախադասութիւններ գողունի կը փսփսային իրարու ականջէ:

Թէ Վոսփորը, թէ քաղաքը կարմիր էին հրավառութենէն, կարմիր՝ ինչպէս Սուլթանի գահն ու ձեռքերը կարմիր են անմեղներու և ազատութեան ձգտողներու արիւնէն:

Բոլոր տեղական թերթերը անգամ մը եւս շնական պինդերեսութեամբ, ամէն խիղճ ու ամօթ մէկդի դրած, ստրկաբար աստուածացուցին Մեծ-Մարգասպա-

նը. հայաթերթեր ձեզի կուգան և այդ ստրկական շաղփաղփանքներու նմուշը դուք կը տեսնէք հոն: Ես կը զրկեմ ձեզի հաս մըն ալ գազդիբէն լեզուով հրատարակուող այդ տեսակի թերթերէն «Սէրվէթ»ը: Կարգացէր, և տեսէք, արդեօք խորիմաստ երգիծարանութիւն մըն է. թէ խելակորոյս սարուկի ցնդարանութիւնները...

Վոսփորի խրախճանքին առանձին շուք մը տուա Գարատաղի իշխանին և իշխանուհոյն ներկայութիւնը Էմիրկէնի պալատին մէջ:

Օգոստոս 15ին կնքեց իր մահականացուն Օրմանեանի աչքի փուշը՝ «Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ» օրինաւորապէս ընարուած Գրիգորիս եպիսկոպոսի Ալեքսանտրոս 59 տարեկան հասակին մէջ: Օրմանեանի աչքը լոյս արգելք մըն ալ պակսեցաւ իր աղտոտ վարմունքի դէմ... հանգուցեալը դիւրաւ կ'լլուող պատառ մը չէր, փուշի պէս դէմ կանէր Օրմանեանի իւղտ օրկորին մէջ... Կըսուի (ստուգութիւնը շատ ալ չենք կրնար երաշխաւորել) թէ տաճկական «սեւ սուրճը», քիչ մը համեմատ զանազան փոշիներով՝ դեր կատարած է սոոյդ, առողջ, զեղադէմ ու հսկայակազմ սրբազանին յանկարծակի մահուան մէջ: Իսկ բժիշկները «remolissement du cerveau» (ուղեղային կակղացում) կնքեցին իր հիւանդութեան անունը...

Կըսեն թէ թուրքիա չի յառաջադիմեր... հիմնականապէս սուտ է ասիկա: Ելեքտրական լուսաւորութիւնը միթէ յառաջադիմութեան նշան մը չէ:

Լրագրութեան հետեւող անձերու յայտնի է որ ասիկէ քանի մը

ամիսներ առաջ Անգլիոյ բառլամէնթի թրքասէր անգամ Աշմէթ Պարթլէթ հոս եկաւ Սուլթանին այցելութեան և խիստ աղէկ ընդունելութիւն մը գտաւ: Պատուելի անգլիացին փորի ցամբ ունէր Սէլանիքի և Իզմիրի մէջ ելեքտրական լուսաւորութիւն մտցնելու կամ այդ քաղաքները ելեքտրականութեամբ լուսաւորելու մենաշնորհը ուղած է. և... ստացած ի հարկէ իբր չնչին վարձատրութիւն մը բառլամէնթի մէջ արտասանած իր թրքասէր ճառերու... վազը, օգտաւ 21ին պիտի ստորագրուի այդ շահաւէտ ձեռնարկին պայմանաթղթերը: Ուրեմն Սէլանիք և Իզմիր ելեքտրականութիւնով պիտի լուսաւորուին... բայց վա՛յ գրպաններուն: Ի՞նչպէս, կը կարծէին թէ Աշմէթ Պարթլէթ ի զո՞ր կը պաշտպանէր Սուլթանի ամէն գաղանթութիւնները: Սուղի պիտի նստին անոր ճառերը Իզմիրի և Սէլանիքի բնակիչներուն:

Պուրսան ալ չի ուզեր ետ մնալ երկու «լուսաւոր» քաղաքներէն: Պանտրմա—Պուրսա երկաթուղով վարչութիւնն ալ կուզէ մենաշնորհ Պուրսան ելեքտրականութիւնով լուսաւորելու... ու ելեր կըսեն թէ թուրքիա չի յառաջադիմեր...

Անցեալները սեղոյս մաքսատունը կը հասնի ելեքտրական շարժիչ մը, զոր բերել տուած էր հարուստ և այգի—պարտիզի սիրահար փաշա մը, իր ծաղիկները ջրելու համար: Մաքսատան պաշտօնեաները կասկածելով այդ տարօրինակ մեքենայէն չի յանձնեցին տիրոջը... թէ եւ տէրը բաւական աղքեցիկ մէկն էր: Պաշտօնեայինքը կը կարծէին թէ «հայերու խաղերն» են

ստոնք... Գործը քաջքշուեցաւ և սուր կերպարանք տուա: Մեքենան չկրցին առնել, մինչեւ որ Սուլթանէն առանձին իրատէ մը շարուեցաւ:

Սուրիշ փաշա մըն ալ փոքրիկ ելեքտրական շարժիչ մեքենայ մը բերել տուեր և նորէն բրանուեր էր (մեքենան, ոչ փաշան) մաքսատան մէջը: Այս անգամ գործը խի՛ստ ծանր էր, սրով հետև մեքենայի վրայ գրուած էր «տիւնամօմաշին» (շարժիչ մեքենայ)... վա՛յ... տիւնամօմ... տիւնամիա... Ալ դուրս կը թողնե՞ն ատանկ մեքենան, որ 96ի դէպքերը կրկնուին... 25, չէ... փաթուտի, շփուտ, աղմուկ, պաշտօնեաներն ու պաշտօնատուներն իրար խառնուեցան, մինչեւ որ խեղդուի լսածուեցաւ:

Ահա թուրքիոյ յառաջդիմութեան մէկ փայլուն ապացոյցն ալ ԲՍԺ:

Յ. Գ. — Ներողութիւն այսօրուան նախնի չկրցայ հասցնել թղթակցութիւնս. բիշ մը ուշ պիտի ստանաք:

Պոստոն, 9 Օգոստոս

Հոս ալ «յիշուի չը յիշուի» խնդիր ծագեցաւ. ժողովուրդը, առանց բացատրութեան, չէր ուզեր որ յիշուի: Սարաճեան էր միայն որ ատեն մը լուս կեցաւ անանելու թէ ժողովուրդի մէջ «յիշուի» կուսակցից կը գտնուի որ ինք անոնց գլուխն անցնի, սակայն իր այդ բազանքը անիրականաբար մնաց «Յիշուի չը յիշուի» կուսակցական խնդիր չեղաւ: Կուսակցականներ և ոչ կուսակցականներ միտք բան դաստապարտեցին Երբողի խրատելակ ստրուլը. «Հայրենիք» թերթը առաջարկեց որ եպիսկոպոսն զաղբեցուէ այդ պիլծ անուան յիշատակութիւնը և «Տիգրիս»

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՐՍԿԱՅԱՅ ՔՐՈՆԻԿ

Երեկ դատաւորի և առաջնորդի կողմից նշանակուած քննիչները ճանապարհվեցին Սալմաստ:

Թաւրիզում այս միջոցին տիրում է ընդհանուր շարժում և ողբերգութիւն զանազան հասարակական գործերի վերաբերմամբ: Հայերը մի քանի կուսակցութիւնների են բաժանվել մեծ մասը անգլիականացար: Ընդերք վերաբերում է «Թաւրիզի հայուհեաց բարեգործ. ընկերութեան» վարչութեան կողմից գործված մի քանի զեղծումներին:

Այդ տիրահոյակ վարչութիւնը մինչեւ ցարդ գործել է ընկերութեան ինչ ինչ յօդուածները սրամարտութեանց հակառակ. ընկերութեան յարգելի անդամներին կէսից աւելին մի բողոքագրով զանգատում և բողոքում է Սրբազան առաջնորդին և քննութիւն պահանջում:

Մենք չենք ուզում այստեղ միատուր թուի վարչութեան ապօրինի և վնասակար գործերը, այդ մասին խորհուրդ կուսակցինք կարգալ Մշակում տպված յօդուածները, թաւրիզից՝ Յոնան Դաւթեան ստորագրութեամբ, որոնցով կարելի է կատարեալ գաղափար կազմել տեղիս հասարակական գործերի և մասնաւորապէս յիշեալ վարչութեան վրայ: Միայն ցանկանում ենք յիշել այն տիւրը երեւոյթները, որ վրիպել են յարգելի յօդուածագրի ուշադրութիւնից:

Ասացէ՛ք խնդրիմ, միթէ կարելի է՞ հաղար եւ մի գծուարութիւններով հաւաքուած հասարակական գրամը աննպատակ կերպով այս ու այն կողմ ծառայեցնել, անձնական կրքերի յագեցման և բարեկամների քաջալերման (°): Ահա, խնդրե՛ք ինչու՞ն է՞ Այս կողմերը ընկել է մի ոմն բազմախնդիր բողոքական հայր բիշիկ. վարչութիւնը նրան նշանակել է ընկերութեան պաշտօնական (sic) բիշիկ. որպէս զի գաղթական հիւանդներին ձրխարստ այցելէ և դարմանէ: Շատ լաւ. սակայն

վարչութեան տեղեկագիրներում կարգում ենք ձրխարստ շոսյուած խոշոր շնորհակալութիւններ և միւս կողմից էլ իմանում ենք, որ վարչութիւնը, կամ լաւես, վարչութեան անգրագէտ նախագահ, իրան թոյլ է տալիս, անցեալ տարի վճարել յիշեալ բազմախնդիրին 100 զոան. և այս տարի էլ 300 զոան արժող մի գորգ է նուիրում: Ո՞վ է իրատունք սալիս նախագահին, որ հասարակութեան պատկանած փողերը, իրա բարեկամին մի հաճոյք պատճառելու համար, նուիրէ. այն փողերը, որ թշուառներին սնունդ և հայ մատաղ սերնդին լոյս մատակարարելու է յատկացված և նուիրված զանազան բարեգործ անձերի կողմից... Երկրորդ հարց, քանի որ յիշեալ բիշիկը զիտելի վարձատրվում է վարչութեան կողմից 400 և աւելի գումարներով. ի՞նչու համար խաբել հասարակութիւնը, թէ այդ բիշիկը ձրխարստ է պաշտօնավարում: Երրորդ հարց, քանի որ վարչութիւնը պիտի վարձատրէ իր ձրի ծառայող պաշտօնական (°) բիշիկին, ինչու համար նրանից հաշիւ չը պա-

հանջեց թէ քանի՞ անգամ է այցելել գաղթականներին և որքան զեղ սեւել: Ինչու՞ համար ուրիշ բիշիկները կողմից չէ քննուած այդ հաշիւի ճշգրտութիւնը. արդե՞օք սենսենք թէ յանուս գաղթականների սրուած այցելութիւնները և զեղբորը արժեն 400 զոան և աւելի:

Ընկերութիւնը լինելով մի բարեգործական հիմնարկութիւն, ինքը կարօտ է նուէրներ ընդունելու. և ոչ թէ նուէրներ և ընծաներ շոսյուելու այս ու այն կողմ:

Դարձեալ նոյն հիման վրայ, վարչութիւնը ի՞նչ իրաւունքով 100 զոան է վճարում Լ.Առաճիկի թերթի խմբագրութեան նրա նուիրած երկու օրինակ թերթի համար. այս սեղ էլ գաւախտիւն. և թէ իսկապէս վարչութիւնը ուզում էր թերթերի արժէքը վճարել, ըստ յայտարարութեան նոյն թերթի, պէտք է վճարել միայն 40 զոան. արդ, ինչու համար 60 զոան աւելի: Երկրորդ, խնդրիմ ասացէ՛ք, այդ Քրտնսերէն թերթերը ձեր հիմնարկութիւնների մէջ ո՞վքեր են, որ պիտի կարգան ու հասկանան—պատասխանը պարզ

նոյնը կրկնեց: Սարածեան իր կամքէն դուրս հպատակեցաւ եկող վտանգը կանխատեսելով:

Ամերիկահայոյն արդէն սկիզբէն ճանչցած չէ Օրմանեանի պատրիարքութիւնը: Երբ ան պատրիարքական աթոռ նստաւ պոստոնցիներ պահանջեցին որ իզմիրլեան յիշատակուի եւ երկար ատեն ժողովուրդի կամքը տիրապետեց: մինչեւ որ ալ ժողովուրդը կարեւորութիւն չտուաւ եւ կըրը սկսաւ պաշտել իր կուռքը: Այսօր այդ կուռքը Սարածեանի ձեռամբ կը փշրենք խաղաղ ու անձայն: Ահա այսպէս է ժողովրդի կամքը, եթէ ան համաձայնի եւ ոչ մի ուժ կրնայ դիմադրել:

Այժմեկի աւելի կարեւոր խնդիր մը կայ հրապարակի վրայ: Եպիսկոպոս մը որ իր հաղուստի մասին կը հետեւի Եւրոպային, ուտեստի մասին «պահք» ու անպահք չի դանապաներ—ասոնք իր անձին հետ կապ ունին—կելլէ կարգիլէ հայ կանանց բնական սիրելի: Բայց Սարածեան վտանգ թող ըլլայ թէ Պարսկաստանի մէջ չէ որ կայրի եւ գործը Ամերիկայի ազատամիտ հայոց հետն է: Մենք շատոնց դադրած ենք կինը կրօնական ստրուկ մը նկատել: Իր հոս գալէն շատ առաջ հայ իրական սեռը լսած ենք մեր բնութիւնը եւ բուն կերպով ծափահարած:

Գեղեցիկ սեռը կը նկատենք հաւասար էրիկ մարդու եւ կուտանք հաւասար իրաւունքներ ընտանեկան հարկի սակ, ինչպէս նաեւ ընկերական շրջանակի մէջ: Արեւմտեան ընտանեկան շրջանակի մէջ, Սարածեանի աննպատակ ջանքերը հոտած գրութիւն մը վերականգնելու մասին: Թրքական հարէմներու պէտք չունինք մենք որ կինը բանտարկուի: Եթէ Սարածեանի հին ուղեղին չհամաձայն-

նիր մեր ազատ ընթացքը, կրնայ վերցունել զաւազանը եւ հեռանալ սակէ, ու մենք մեր նախնեաց սովորութեան համաձայն անպէտաման մը կը կտորենք իր ետեւէն: Իսկ եթէ եպիսկոպոսը շարունակէ համառել եւ տիրապետական դիրք բռնել, մենք գիտենք ինչպէս պիտի վարուինք Աստուծոյ ուտիրականին հետ: Արդէն ժողովուրդը սկսած է ահաճութեան նշաններ տալ. «ո՛ւ՛՛ֆ, սա կղերը մէջ տեղը կապականէ», կը լսուի ամէն տեղ: Այս երկրի մէջ ժողովրդի կամքը տիրող օրէնքն է: Հոս եպիսկոպոս մը չկրնար «ոչխարանք» գտնել անոնց «չօպան» ըլլալու . . .

Հապա ոս «Տիրգրիս» խմբագիրը, ասոց ինչ ըսենք որ նախանձէ գրողու եւ եպիսկոպոսը շողորդելու պիտի վարակած հայ կնոջ խօսելու իրաւունքը Հայաստանի այլախոսած կողմերու խնդրոյն հաւասար կը դառնանի . . . անպէս կը համարի:

Իր բառերը գործածելով, «երջանիկ ենք» որ սզատ Ամերիկայի մէջ ընկապետութեան թէր ելլող խմբագիր ունինք:

Ի՛հ . . .

ԼԵՑ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շահալ կրկին հրապարակ եկած է, բայց այս անգամ ո՛չ թէ միայն «համալ» իրաւունքը պաշտպանելու, այլ հին սուտ մը «կլլեցնելու» ձեր պատուարման ընթացքով, իբր թէ առաջին անգամ Սօֆիա գտնուած միջոցիս բարձրագոյն պաշտօնէի մը դիմած լինիմք քանի մը գաղթական «սրիկաներ» արտաքսել տալու համար:

Այս սուտը երկու ամիս առաջ զինուորականի մը խելագատակէն ելած էր. այն ժամանակ զինուորական նախարարին համար էր

խօսքը: Բայց վերջը տեսնուելով թէ այս «պոչաւոր» սուտը կլլող չըլլար, ներքին գործոց նախարարին գլուխը փաթթուեցաւ ուրուն հետ կրնայի յարաբերութիւն ունենալ:

Նս ժամանակին բանի-բերանոյ հաւաստեցի թէ այդպիսի վատութիւն մը մտքէս անգամ չէ անցած: Սակայն կերեւայ թէ իմ սուտը բացատրութիւններս մըտքերն չեն հանգարտեցուցած, որով կրկին անգամ հրապարակ կը նետուի այս սուտը աւելի մատնութեան մը գոյնով:

Սօֆիա բնակող աղբարիք լաւ գիտեն թէ ես առանձին ներքին գործոց պաշտօնատունը չեմ գացած, ուլ միշտ ընկերակից մը ունեցած եմ հետս որոյ ներկայութեանը Մարտ ամսոյ 7ին առաջին եւ վերջին անգամ ըլլալով տեսնուեցայ ներքին գործոց պաշտօնէին հետ եւ այն ալ միայն վայրկեան մը. զի հարիւրաւորներ դուրսը սրահը կը սպասէին իրենց կարգին՝ ներկայանալու նախարարին: Միայն պաշտօնիս վրայ խօսք եղաւ. ե ո՛չ ուրիշ բան:

Եւ հակառակ իմ փափագանոցս պատիւ չունեցող կրկին ներկայանալու բարեբախտութիւնը վայելել: Զի այս բարձրագոյն պաշտօնեայն այնպիսի մտահոգութիւններ ունի, որք իրեն չեն ներեր Ֆիլիպպի ափ մը հայոց խնդրով զբաղելու, ե յիմարութիւն է մտածել թէ Պ. Ռատուլովօս սիրով ընդունի այնպիսի մը որ այլոց ազատութիւնը կապտելու միջոցները վատարար կառավարի:

Այս տողերը բուական համարելով յարգարարցումս իմ անձիս, կաղաչեմ, բարեհաճեցէք հրատարակել զայս ձեր թերթին մօտակայ թիւերէն միայն մէջ:

Բժ. Մ. Փաֆիագեան
Սօֆիա, 20 Օգոստոս
—)(—)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պ. Յի թօ. եթէ հրապարակի վրայ երեւնալ ու բան մը ընել կուզէք, ատոր ըսելիք չունինք. իսկ մեր պատասխանը ձեր նամակին՝ հետեւեալ հարցումներն են. վարժարանիս երեք տարուան բարեկարգ յարատեւութիւնը առանց սեւ է պաշտօնէի մը փոփոխման. Ս. եկեղեցւոյս կալուածոց՝ այն է փլած փլկուած ջաղացքներու վերանորոգութիւնը եւ նոյնիսկ նոցա ապահովագրութեան գրուիլը, երեք հաս նոր քարակիր խանութներու շինութիւնը—թաղականութեան եւ հողաբարձութեան համերաշխութեան թէ անհամարաշխութեան, կանոնաւորութեան թէ անկանոնաւորութեան արդիւնք են: Շատ հաւանական է որ մէկգմէկու դէմ անձնական կրքեր եւ հաշիւներ ունեցած ըլլան, բայց այդ ամէնը ինչ որ մենք գիտենք, եւ ճշմարտութեանը կասկած չունինք, հանդէպ կրթական եւ աղբ. գործին որ եւ է վիստ մը սուտ չըլլալէ զատ, թաղական եւ հողաբարձութեան թեանց աւելի եռանդը եւ փափաքը զրգոած են եւ ոչ ուրիշ բան:

Գալով երիտասարդութեան մասին Պ. Յի թօի գրածները թէեւ բոլորովին սխալ, բայց ենթադրենք որ ճիշդ ըլլայ: Միթէ կը մոռնայ Պարսիք որ մարդիկ այլ եւ այլ յատկութիւններ ունին. ոմանք գրելու, ոմանք գործելու: Մենք գրած ենք. իսկ դո՛ւք կրնաք գործել: Վստահ եղէք որ մենք ալ ձեզի հետ պիտի ըլլանք:

Իսլիմիա, 19 Օգոստոս

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ՆՈՐ-ԸՆԹԵՐՏԱՐՈՒՆ
Ա. Տարի

Այս պատկերագրող Գերական-Ընթերցարանը, որ արտասահմանի համար յարմարագոյն դասագիրքն է իր սեսակին մէջ, կը ծախուի կաղմոգին քով ի վառնա: Արիչ քաղաքներէ գիտիլ սա հասցէով

J. G. Bondjoukian
Varna
—)(—)

է—ոչ ոք: Արդ, ինչո՞ւ համար այդ աւելորդ ծախսը:

Եւ դարձեալ. ո՞վ է իրաւունք տալիս վարչութեան, որ Մշակում չը սպազորուած իր մէկ հերքում—յօղուածի համար 40 դրան վատնելով, հեռագրում է խմբագրութեան սպագրիւլ այն խայտառակ եւ ստալոգ հերքումը: Ինչ ստիպողական հարկ կար 40 դրան հեռագրի համար վճարել ընկերութեան գանձարանից, պարզապէս անձնական կրքերին յազուարդ ապրու համար գողանալ աղքատներին յակազցվաց փողից . . .

Այս նուէրները, այս անտեղի ծախսերը եթէ վարչութիւնը իր անձնական գրպանից հողար, մենք առաջինը կը լինէինք նրանց ծափահարողը: սակայն երբ համարձակվում են բարեգործների կողմից յանուն աղքատների եւ չքաւոր սերունդի լուսաւորութեան գործին նուիրուած գրամները իրանց փառքին ու եսին ծառայեցնել, մենք պարտականութիւն ենք զգում որ զօքել հասարակութեան կողմից իբր նոյն հասարակութեան մի անդամը, եւ հաշիւ պահանջել: Այս անսե-

ղի ծախսերը դուք կը տեսնէք տեղեկագրում գումարահան ծախսեր վերանագրի տակ 2000 դրանից աւելի այսինքն 1000 ֆրանք. . .

Շարժումի խմբագրութեան աչքը լոյս. այստեղ էլ սկսվել է օտարի եւ տեղացւոյ խնդիրը: Երբ գրոյց եկած եւ տեղի հաստատուած մի քանի ինտելիգենտ հայեր խառնվում են հասարակական գործերին եւ ցանկանում են յանուն տեղացիների օգտին մի քանի անկեղծ խորհուրդներ տալ, իսկոյն ձայն են բարձրացնում մի քանի ազիտ արմարներ:

— Նրանք օտար են, ի՞նչ իրաւունքով խառնվում են մեր գործերին, եւ այլն:

Ա՛խ, այս օտարախ օտար բառը, թունաւոր նետի նման խոցում է ճշմարիտ հայի սիրտը. թունաւորում է հայութեան ամբողջ օրգանիզմը. . . : Արեւմտ. Բուլղարիան եւս ունեցաւ իրան հետեւողը—Պարսկաստանը. այս սեղ էլ Բուլղարիայի նման սկսել են խտրի գնել եկեղոր եւ տեղացի հայի մէջ. օտար, օտար են

նկատվում այն հայերը, որոնք շատ տեղացիներինց հողաբարպատիկ աւելի բարձր են կրթութեամբ, զարգացմամբ, խելով եւ գաղափարականի ծառայելու բարձր ընդունակութեամբ օժտուած եւ աւելի ճշմարիտ հայեր են . . .

Հայ հասարակութեան համար ո՞վ է իսկապէս օտարը, ասացէք խնդրեմ: Այն չէ՛ միթէ՞ օտարը որ օտար է նկատում ճշմարիտ հայ գաղափարական երիտասարդութիւնը: Թէ այն որ հասարակութեան փողով իրա համար փառաց կոթողներ է կանգնում, որ պարտի ու եկեղեցու գրամով չլինքը հաստացնում, որ ամէն մի հանրօգուտ գործի արգելք ու խոչնդոտ է լինում, որ իր խոր սպիտութեանը անդէս՝ յամառում ու պնդում է ինքնիրան հասարակական գործից ցոյց տալ, որ ոգովի լով ժողովրդի սպիտութիւնից եւ զանազան հանգամանքներից պղտոր ջրում ուղում է ձուկ որսալ, որ գիտնալով իրա անկարողութիւնը, անձեռնահասութիւնը եւ խոր սպիտութիւնը վարում է հանրային պաշտօններ, ամէն ինտրիգ գործ զնում՝ զանաւ ընկե-

րութեան վարչական անդամ, երեցփոխ, հողաբարձու, եւ նոյնիսկ ուսուցիչ . . .

Սակայն ո՞վ է մեղաւորը, որ դրանց նման հայութեան համար օտարներ համարձրվում են հայտնի հայութեան աղիւ մասը կաղմոգ զարգացած ու գաղափարական երիտասարդութիւնը: Անշուշտ, մեղաւորը նրանք են, որ փոխանակ մի փառաւոր ապտակ տալու այդպիսիներին, փոխանակ արհամարհելու նրանց, քաջալերում են, յարգում եւ շողորդում . . .

Մեծ յոյս ունինք, որ վատը լաւից եւ իսկապէս օտար հայը (մտածումով, գործով եւ գաղափարով) ժշմարիտ հայից ջոկող աղիւ երիտասարդութիւնը մօտաւոր ապագայում պատրաստ կը լինի փառաւոր ապտակ տալու այդ կարգի ստորարարաններին, ու մենք շուտով կը տեսնենք իրաւունքի եւ ճշմարտութեան յաղթանակը . . .

ԳԵՏԱԿ
Թաւրիզ, 18 Օգոստոս
—)(—)

Հ Ա Շ Ո Ւ Ե Յ Ո Յ Ց

Հանդիսակազմողի անոթի վաճառքի մեջ Ապրիլ 23ի գումարած միջինների

Table with 2 columns: Description and Amount. Items include 'ՄՈՒՏՔ' (30.00), 'Հանգանակություն' (240.35), 'Միջինների օրը բազմի մեջ գրուած պահանջներ' (279.25), 'Երկրորդ հանգանակություն (Մայիս 9ին)' (20.00), 'Համագումար' (539.60).

Table with 2 columns: Description and Amount. Items include 'ԵՆՔ' (30.00), 'Տպագրութիւններու համար' (20.00), 'Այլևայլ նամակներու տպագրութեան համար թուղթ եւ պահարան' (7.70), 'Նամակագրողներու եւ փոսթի աշխատող ծախսեր' (18.50), 'Միջինների յայտարարութիւնը ցրուողին' (1.00), 'Հանգանակողի քաշուած հետագրի' (104.10), 'Վաճառքի կեդր. Յանձնախումբին յանձնուած' (388.30), 'Համագումար' (539.60).

Ի դիմաց միջինների դիւանին Կառնազար Տ. Ա. Աւիրյանեանց Քարտուղար Տ. Յ. Աճեմեան Գանձապետ Տ. Յ. Բարսաւեան

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ

Հանդիսակազմողի անոթի գումարած 1000 հարաւանի վաճառքի կեդրոնական Յանձնախումբին դիմաց գումարների

Table with 2 columns: Description and Amount. Items include 'ՄՈՒՏՔ' (30.00), 'Վաճառքի միջինների դիւանին' (388.30), 'Թրոնողային' (20.00), 'Շուտվազէն' (30.00), 'Պարկազէն' (30.00), 'Պարիւզէն' (60.00), 'Սլիվէնէն' (30.00), 'Սիւրսարէնէն' (41.15), 'Ռուստուքէն' (100.00), 'Ֆիլիպէնէն' (100.00), 'Թրիւսթէնէն ազգային մը' (10.00), 'Պարբէնէն' (60.00), 'Ֆիլիպէնէն' (159.00), 'Համագումար' (1028.45).

Table with 2 columns: Description and Amount. Items include 'ԵՆՔ' (30.00), 'Տպագրութեան համար' (16.00), 'Փոսթի' (12.60), 'Հոսարար Ռուբէնին՝ կազմի մոմի եւ իր ծառայութեան համար' (7.00), 'Աճիօ, արծաթ գրամով դրամուած 26 1/2 նարոնների համար' (29.25), 'Տ. Մինաս Չերազին զրկուած (Ապրիլ 30ին) չէթով մը 27 1/2 նարոններ' (550.00), 'Նոյն չէթին համար միջինորդ չէթ եւ գրոշմ' (3.55), 'Չորս քաղաքներու համար հետագրի' (2.45), 'Կրկին Տ. Մինաս Չերազին զրկուած վերջին գումարը եւ զրկելու համար ծախսը' (407.60), 'Համագումար' (1028.45).

Ի դիմաց Վաճառքի կեդրոնական Յանձնախումբին Ատենապետ Վ. Ատենազարի Դոկ. Աշ. Արարիկեանց Տ. Յ. Աճեմեան Գանձապետ Տ. Յ. Բարսաւեան Վաճառք, 26 Օգոստոս

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ք Ր Ո Ւ Ն Կ

Տիրապետի տեղապահ Եղեկի Վ. Ալի-Քուշարի եկեղեցւոյն նորոգութեանը համար գումար մը խնդրած է Պատրիարքարանէն. նպատից յանձնաժողովը մերժեց է, առարկելով որ իր տրամագրութեան տակ այդպիսի պէտքերու բաւելու չափ գումար չունի:

— Քանի մը քահանաներ Պատրիարքարանէն խնդրած են որ կամ իրենց պարտքերը վճարուի, կամ ապրելու համար նպատարուի: Ատոնց մէջ է և Սօֆիայի Արիստակէս քահանան:

«Սուրհանդակ»ը մեծ անիրաւութիւն կը համարէ եթէ այս կարգի եկեղեցականներուն դրամ վճարէ պատրիարքական սնտուկը:

— Խարբերք և ուրիշ տեղեր շրկելու համար մէկ քանի վարդապետներու պէտքը շտապուած ըլլալով, դիմում պիտի ըլլայ Երուսաղիմայ Պատրիարքին, որ պէտքի գաւառական հովուութեան համար տրամագրելի եկեղեցականներու անունները հազարդէ:

— Չէյթունի որբանոցի խնամակալութիւնը՝ որբանոցին մասին ընդհանուր տեղեկագիր մը չըրկած է Պատրիարքարան, որուն մէջ յայտնելով թէ որբանոցի թիւը աւելցած է, խնդրած է որ միջոցներ ի գործ դրուին ուրիշ որբանոց մըն ալ բացուելու համար:

— Կալկաթացի հայ քահանայ մը, Յակոբ Աննեանց անգլիերէն լեզուով տետրակ մը հրատարակեց է հայ եկեղեցւոյ կազմութեան և վարդապետութեան մասին:

— Ամիկար Չիպրիանի «Լաթիթ Ռէբիւպլիք» ֆրանսական թերթին մէջ հայերու մասին յօդուած մը հրատարակած է, որու թարգմանութիւնը Բարիւզէն մեղ զրկուած է և միւս համարի մէջ պիտի հրատարակենք:

— Չմիւսիայի Ազ. հիւանդանոցը 500 ոսկի պարտքի տակ մնայած է, որովհետեւ կարգ մը աւելորդ մարդիկ լեցուցեր են հոն. մինչդեռ հաստատուած կանոնադրով 75 անկողին հիւանդներու համար սահմանուած է և մէկ ալ բոլորովին անոք մնացողները պիտի ընդունուին հոն:

Այնինչ հիմա ատոր կրկնապատկը և եռապատկը կը գրտնուի հոն. հիւանդանոցին մէկ մասը ծերանոցի և ծուլանոցի վերածուցեր է:

— Կը լսենք թէ Վաճառքի ազգային վարժալանի անօրէնը և երկու ուսուցչիչները Վահան Նահարման, Պիօնեան և Վահան Մանուէլեան հրաւիրուած են Ֆիլիպպոսի հոն պաշտօնավարելու: Երեքն ալ արդէն ճամբայ ինկած են:

Տեսնենք թէ Վաճառքի հոգա-

բարձութիւնը որու պիտի յանձնէ վարժարանները . . .

— Թիֆլիզի Ռուս լրագրի մը լսածին համեմատ, ներքին գործերու նախարարը յուլիս 6ին հաստատեց է այն նոր կանոնադրութիւնները, որոնց հիման վրայ, կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութիւնը, Հայ կրկնուրու Բարեգործական ընկերութիւնը Թիֆլիզի մէջ, նոյնպէս և Բաքուի Հայոց Մարդասիրական ընկերութիւնը պիտի վերակազմուի:

— Պօլտոյ Դառը-Քարուի թաղական խորհուրդը եկեղեցիէն ուշ մնացած աշակերտները պատժելով բանտարկեց է եկեղեցւոյ նկուզին մէջ, ուր ննջեցեալ մը գտնուեց է:

Այդ աշակերտները երկու ժամու չափ ննջեցեալի ընկերակցութիւնը վայելելէ վերջը, ապառուներ են պաշտօնեայի մը ձեռքով, որ չէ կրցեր դիմանալ խեղճերու ստիկուսի աղետարչ ազդակներուն:

Աշակերտներէն մէկը այժմ հիւանդ է:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Սերպիոյ Դաթալի թագուհին որ գրեթէ մօտ երկու տարի Ալեքսանտր թագաւորի հետ թըղթակցելէ դադարած էր, այսինքն Միլանին Սերպիայ վերադառնալէն սկսեալ, մօտերս նամակ մը գրած է խնդրելով որ ազատականներու պետքը չը զոհարենք Միլանի վրէժխնդրութեան. որովհետեւ ինքը վերջնականապէս իր գահը պիտի կորսնցնէ այդ ժողովրդի և արքայատան մէջ տեղի ունեցող պայքարին մէջ:

— Նոր խռովութիւններ տեղի ունեցեր են Չինի Բիո-Չիու նահանգին մէջ: Գերմանացիները ստիպուեցին զիմադրել քանի մը տեղային ապստամբութիւններու: Վեց չինացիներ սպաննուած են: Գերմանական զորքակառարը բողոքեց է Չին կառավարութեան մանտարիներու բռնած դիրքին դէմ:

— Սէնթ-Տօմիկոյի յաղթական ապստամբութեան գլուխը—Ժիմէնէց, կը սպասուի եղբի Բիւէրթօ-Բլաթա: Նա Սէնթիակօ զրկած է յայտագիր մը՝ որով կը յայտարարէ թէ՛ մտադիր է հաստատել կառավարութիւն մը Միացեալ Նահանգաց կառավարութիւնը օրինակ ունենալով պիտի քաջալերէ վաճառականութիւնը և հասարակապետութեան յարաբերութիւնները օտար պետութիւններու հետ պիտի ընդարձակէ:

Յեղափոխական կառավարութիւնը սպասուով որ Ժիմէնէցը պիտի դայ կառավարութեան զեկը իր ձեռքը առնելու, հաստատուեց է Կիբաօի մէջ:

Ապստամբները ամէն տեղ ամենամեծ չափաւորութեան փաստեր կուտան:

— Թուրքիոյ դեսպանը պաշտօնապէս խնդրած է Ռուսիոյ կառավարութեանէն Պարբէնի Ալպանական գօնկրէն արգիլել:

Կառավարութիւնը նաարկերէ կը խնդրէ թէ խնդրէր շատ փափակ է, որովհետեւ Ռուսիան օրէնքները օտարներուն չեն արգիլել ժողովներ կազմել և ուղածնուն չափ վիճաբանիլ:

Այնուամենայնիւ խոստացեր են խնդրելու ուսումնասիրել և պատասխան մը տալ թիւրք դեսպանին:

— Վիէնայի մէջ շատ կը հետաքրքրուին Ռուսիոյ, Գերմանիոյ և Անգլիոյ միջեւ տեղի ունեցած այն ընդհանրութեան պատճառով որ ծագեր են Պօլսու, Վոսիօրէն կամ միջերկրական ծովէն դեպի պարսից ծոցը շինուելիք երկաթուղիին համար:

— Սուլթանը դժգոհ եղած է որ հայ կաթողիկոսներու նորնոր Պատրիարքը ստանձնած է իր պաշտօնը առանց Սուլթանի հաստատութեան սպասելու:

Հրագրիչներուն խոտու թեւաբար գրելուած է Պատրիարքի անունը յիշել: Բ. Գուռը յայտարարեց է որ միայն Պապի հաստատութիւնը չը բաւեր:

— Ֆրանսական թերթերը կը հազարդեն որ 1900 թուի Բարիլի ցուցահանդէսի միջոցին, հոն հարիւրէն աւելի գօնկրէ տեղի պիտի ունենայ:

Ա Ջ Գ

Քաղաքի Ազգ. երկսեռ վարժարանները եւ մանկապարտէզը, Սեպ. 1, չորեքշաբթի օրը կը վերաբացուին:

Ուստի ծնողքներ եւ պաշտպաններ կը հրաւիրուին վաղուէ սկսեալ ամէն առաւօտ ժամ 9—13 Խորհրդարանը անձամբ ներկայանալով աշակերտներու ընդունելութեան պայմաններուն վրայ բանակցելու ստանալ մտից արտօնագիրը:

Ի դիմաց Հոգաբարձութեան Ազգ. երկսեռ վարժարանաց

Ատենազար Ատենապետ Գ. Կիւչիսիւրեան Յ. Մ. Թովմասեան Վաճառք, 24 Օգոստ.

Ա Ջ Գ

Ամիրխանեանցի դպրոցը կը բացուի սեպտեմբեր 1ին:

Փափաղողներէն կը խնդրուի դիմել Ամիրխանեանցի Պալկանաքայ փողոց, թիւ 239:

Ամէն օր ժամը 10—12 առաւօտ, և 4—6 երեկոյ:

Ա Ջ Գ

Կիմնազիական կրթութիւնով երիտասարդ մը կը փախաբի Ֆիլիպպի վարժարանը գաւախտել Պալկանաքային, Պատմութեան, աշխարհագրութեան եւ բնական գիտութեան, զիմի խմբագրութեան: